ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԺԱՄԱՆԱԿ ՀԱՆՐԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՎԱՐՈՐԴՆԵՐԻ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԻ

Երկրաշարժը, որպես կանոն հանկարծակիի է բերում մարդկանց, ուստի կարևոր է լինել իրազեկ՝ այդ իրավիճակին ճիշտ ու կազմակերպված արձագանքելու համար:

Եթե դուք վարում եք հանրային տրանսպորտ

ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԺԱՄԱՆԱԿ

- Երբ զգաք ուժեղ ցնցումներ, մի փորձեք պահել սովորական ընթացքը, ճանապարհի վիճակն անկանխատեսելի կլինի:
- Տպավորություն կարող է առաջանալ, թե անիվն է վնասվել կամ մեքենան չի ենթարկվում կառավարմանը:
- Խուճապի մի՛ մատնվեք:
- Անմիջապես դանդաղեցրեք ընթացքը՝ խուսափելով կտրուկ արգելակումից, որպեսզի ուղևորները չվնասվեն:
- Շարժվեք դեպի ճանապարհի աջ հատվածը, հնարավորինս հեռու խոշոր կառույցներից:

Միացրեք ռադիոընդունիչը կամ տեղեկատվական համակարգը պաշտոնական տեղեկություններ ստանալու նպատակով:

ԱՐԳԵԼՎՈՒՄ Է ԿԱՅԱՆԵԼ՝

- Կամուրջների տակ կամ վրա:
- Բազմահարկ շենքերի կողքին:
- Էլեկտրասյուների և էլեկտրական գծերի ներքո:
- Ծառերի տակ, փլուզման վտանգ ունեցող հենապատերի մոտ, բենզալցակայանների և գազալցակայանների մոտ:
- Գովազդային վահանակների ներքո:

ԽՈՐՀՈՒՐԴ Է ՏՐՎՈՒՄ ԿԱՅԱՆԵԼ՝

- Բաց տարածքներում:
- Բաց ավտոկայանատեղիներում:
- Այլ մեքենաներից անվտանգ հեռավորության վրա:

ԻՆՉ ԱՆԵԼ ԿԱՅԱՆԵԼՈՒՑ ՀԵՏՈ

- Եթե տարածքը համեմատաբար անվտանգ է, ապա ուղևորները կարող են մնալ տրանսպորտային միջոցում:

Եթե մեքենան գտնվում է վտանգավոր վայրում, օրինակ մոտ է խոշոր կառույցներին ապա կազմակերպեք ուղևորների դուրսբերումն այդ կառույցներից հնարավորինս հեռու:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐԿՐԱՇԱՐԺԻՑ ՀԵՏՈ

Հնարավորության դեպքում կազմակերպեք առաջին բուժօգնություն:

Հնարավորության դեպքում հետևեք պաշտոնական տեղեկատվությանը:

Իրավիճակի վերաբերյալ տեղեկացրեք համապատասխան ծառայություններին:

Ստուգեք՝ արդյոք հնարավոր է անվտանգ շարունակել երթևեկությունը:

Մի սկսեք շարժվել, մինչև չստանաք պաշտոնական հաստատում՝ ճանապարհի անվտանգ լինելու վերաբերյալ:

Մշտապես կիրառական վիճակում ունեցեք առաջին բուժօգնության պայուսակ, կրակմարիչ, լապտեր, ջուր և կապի միջոց (բջջային հեռախոս, ռադիոկապ):

ՀՀ ՆԳՆ Սեյսմիկ Պաշտպանության Տարածքային Ծառայություն ՊՈԱԿ-ի
Բնակչության հետ տարվող աշխատանքների վարչություն
Հեռ: 060372275, 060372230
Էլ. Փոստ: nsspbtav@gmail.com
Վեբ կայք: https://www.nssp.am/hy